
ՏԻԳՐԱՆ ՉՈՒԽԱՃՅԱՆԸ ԵՎ ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՈՒՂԻՆԵՐԸ
(Ծննդյան 180-ամյակի առթիվ)

ԱՆՆԱ ԱՍՍՏՐՅԱՆ

1898 թվական, 10-ր մարտի: Զմյուռնիայում, ծանր տառապանքներից հետո, դեմքի քաղցկեղից 61 տարեկանում կյանքից հեռանում է հայ երաժշտության դասական, հայ երաժշտական թատրոնի հիմնադիր, հանճարեղ կոմպոզիտոր, շնորհաշատ դաշնակահար, տաղանդավոր դիրիժոր, վաստակաշատ մանկավարժ, եռանդուն երաժշտական-հասարակական գործիչ Տիգրան Չուխաճյանը (1837–1898): Իսկ մինչ այդ... մինչ այդ՝ մահվան մահձում կոմպոզիտորն իր սնարի մոտ հերթապահող Սմբատ Քեսեճյանից խնդրել էր Ջ. Վերդիի «Օթելլո» երաժշտական դրամայի պարտիտուրը, գրկել այն, սեղմել կրծքին ու հրաժեշտ տվել երկրային կյանքին... Ընտրությունը պատահական չէր. Տ. Չուխաճյանն իր մասնագիտական կրթությունն ստացել էր օպերայի հայրենիքում՝ Իտալիայում, և դաստիարակվել Վերդիի օպերաների պարտիտուրներով: Դեռևս իր կենդանության օրոք իտալացիները նրան անվանել էին «Հայկական Վերդի», իսկ 1909-ին Բոլոնիայի թերթերից մեկում լույս էր տեսել «Il Verdi Armeno» հոդվածը:



Ավելին: Երաժշտարվեստում կատարած առաջին քայլերից արդեն Տ. Չուխաճյանն ու Վերդին իրենց ճակատագրերում ունեցան ընդհանրություններ. Վերդիին բախտ չվիճակվեց ընդունվել Միլանի կոնսերվատորիան, ստանալ բարձրագույն երաժշտական կրթություն: Նա բավարարվեց Լավինյայի մոտ մասնավոր պարապմունքներով և օպերային Օլիմպոսը նվաճեց ինքնակրթությամբ՝ շնորհիվ իր հանճարի ուժի: Չուխաճյանը ևս չսովորեց բարձրագույն երաժշտական հաստատություններում, բայց ստեղծեց երաժշտական թատրոնի գոհարներ՝ ապավինելով օպերային դրամատուրգի իր ձիրքին և շոայլ մեղեդիական մտածողությամբ: Վերդիի գեղագիտական հայացքները ձևավորվեցին իտալական հեղափոխական ռոմանտիզմի ազդեցության ներքո: Վերջինիս՝ հանուն ազատության, անկախության և ազգային համախմբման՝ իտալական ժողովրդի պայքարից անբաժան

ստեղծագործությունը երբեք չիսկեց կապը Ռիստրօիմենտոյի դարաշրջանի հետ. նա դարձավ իտալական հեղափոխության մասնատրոն: Նույն ճանապարհով ընթացավ և Տ. Չուխաճյանը, ում բաժին ընկավ XIX դարի երկրորդ կեսի արևմտահայության ազգային-ազատագրական պայքարի երգչի առաքելությունը:

Թե՛ Վերդին և թե՛ Չուխաճյանն օպերային խոշոր դրամատուրգներ էին, և երաժշտական թատրոնը մշտապես նրանց ստեղծագործական հետաքրքրությունների կիզակետում էր: Երկու երաժիշտներն էլ օպերային արվեստում իրենց ստեղծագործական վերջակետը դրեցին 1890-ականների սկզբներին. 1893-ին 80-ամյա Վերդին՝ «Ֆալստաֆ» կոմիկական օպերայով, իսկ 1891-ին 54-ամյա Չուխաճյանը՝ «Ջեմիրե» հեքիաթ-օպերայով: Վերդիի ստեղծագործությունը XIX դարի իտալական օպերայի զարգացման բարձրակետն է: Նույն դերն էր վերապահված Չուխաճյանի երաժշտական թատրոնին՝ հայ երաժշտության մեջ: Սակայն ի տարբերություն Ուսուցչի, որը հենվեց իտալական օպերայի նախընթաց զարգացման և հարուստ ավանդույթների, Ռոսսինիի, Բելլինիի և Դոնիցետտիի ստեղծագործական նվաճումների վրա, Չուխաճյանը հայ օպերային երաժշտության մեջ չունեւ նախորդներ. նրա առաքելությունը հայոց օպերային արվեստի սկզբնավորումն էր և զարգացումը...

Արձագանքելով Տ. Չուխաճյանի մահվան գույժին՝ «Բազմավեպը» 1899-ի փետրվարյան համարի «Նշանաւոր հանգուցեալք» բաժնում տպագրած «Հայ Վերտին» վերտառությամբ հոդվածում նկատում է՝ «Մինչդեռ բնութեան քաղցրաբոյր եւ քաղցրանուազ նոր սերունդը կը պատրաստուէր՝ ձմրան տխուր վարագոյրը պատառելով՝ գալ զարդարել զարնան զուարթութիւնը, եւ երբ բնութեան նորածին ու երիտասարդ երաժիշտք լանջերնին ուռած դայլայլիկնին կը հնչեցնէին, Չուխաճեանի թշուառ հոգին կը յուզուէր, կը հիւծէր Չմիւռնիոյ մթնոլորտին տակ, տխուր մահճին մէջ. այն հոգին՝ որ կը յուսար իւր թրթռուն ձայնով ու մատուրնէրով՝ հետեւիլ բնութեան երաժշտաց սրբենի ճշտութիւններուն. այն հոգին, որ 55 տարինեքէ ի վեր Պոլսոյ սալոններուն եւ թատերաբեմերու մէջ իբր Հայ Վերտի կը ծափահարուէր. այն հոգին՝ որուն վառվորուն երեւակայութեան գեղեցիկ արտադրութիւններն ի Փարիզ, յԵգիպտոս եւ յԱթէնս համակրելի ընդունելութիւն գտած էին: Չուխաճեան կը պատրաստուէր վերահաս ամրան հետ տեսնել նաեւ իր կործանուած առողջութեան ամառն ալ, բայց անաչառ քաղցկեղը կը ճնշէր նորա մարմինը, եւ նուագելի հոգին թեւ առնելով՝ կը սաւառնէր»¹:

Տ. Չուխաճյանի մահից ճիշտ 60 տարի անց՝ 1958-ի օգոստոսի 1-ին, Երևանում իր դռները բացեց մեծ կոմպոզիտորի անունը կրող մանկական երաժշտական դպրոցը, որտեղ հենց հիմնադրման օրվանից սկսեցին գործել

¹ Հ. Ս. Երևմ. Հայ Վերտին. – «Բազմավեպ», 1899, հ. ԾԷ, փետրուար, էջ 6:

դաշնամուրային, լարային, փողային և ժողովրդական գործիքների բաժինները, իսկ տասը տարի անց՝ 1968-ին, բացվեց կիթառի՝ Հայաստանում առաջին դասարանը՝ Էդվարդ Բադալյանի ղեկավարությամբ: 1970-ին դպրոցում կանգնեցվեց հայ քանդակագործ, ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ, պրոֆեսոր Արշամ Արտաշեսի Շահինյանի՝ պլաստիկական խոշոր ծավալներով և մոնումենտալ ձևերով լուծված Տ. Չուխաճյանի կիսարձանը:

Ակամա հիշում ես, թե, ըստ անտիկ ավանդության, Հին Հունաստանի էպիկական լեգենդար բանաստեղծ Հոմերոսի ծննդավայրը համարվելու պատվի համար ինչպես են վիճել «յոթ քաղաքներ»՝ Ջմյուռնիան, Քիոսը, Կոլոփոնը, Սալամինը, Հոդոսը, Արգոսն ու Աթենքը:

Եթե վեճ գնար Տ. Չուխաճյանի համար, ապա պետք է վիճեին ոչ թե միննույն երկրի քաղաքները, այլ՝ երկու տարբեր, հարևան պետություններ՝ Հայաստանը և Թուրքիան: Բայց վեճ չի հարուցում Տ. Չուխաճյանը. խորհրդանիշն այն բացառիկ երևույթի, երբ միննույն անձը երկու ժողովրդի պատմության ու կյանքի մեջ է մտնում միաժամանակ թե՛ իբրև երաժշտական թատրոնի հիմնադիր, թե՛ իբրև եվրոպական կամերային-գործիքային ու սիմֆոնիկ երաժշտության մի շարք կարևոր ժանրերի սկզբնավորող:

Դեռևս կյանքի օրոք Տ. Չուխաճյանը դարձավ համաարևելյան երևույթ: Նա ոչ միայն թուրքական², այլև, առհասարակ, մերձավոր արևելյան երաժշտական թատրոնի հիմնադիրն է:

Տ. Չուխաճյանն առաջինն էր արևելյան երաժիշտներից, ով ստանալով մասնագիտական երաժշտական կրթություն և կատարելապես տիրապետելով եվրոպական կոմպոզիտորական տեխնիկայի գաղտնիքներին՝ գտավ Արևելքի և Արևմուտքի երաժշտական մշակույթների մերձեցման ուղիները, արևելյան երաժշտության մեջ արմատավորեց օպերային, սիմֆոնիկ ու կամերային երաժշտության ժանրերը: Նրա գործունեությունը մեծ նշանակություն ունեցավ թուրքական երաժշտության հետագա զարգացման համար. նա երաժշտական թատրոնի, մեներգային, խմբերգային ու նվագախմբային գրության եվրոպական սկզբունքների արմատավորողն է Օսմանյան կայսրության մեջ:

Ոգևորված Չուխաճյանի կոմիկական օպերաների հաջողությունից՝ Ահմեդ Միդհատն ու Պետրի Բեյը գրում են թուրքական առաջին օպերետները՝ «Ձեյբեկներ», «Վարդագույն աղջիկ», «Ճենկի», «Զիպա» և այլն: Ի տարբերություն Չուխաճյանի, ում օպերաները նախատեսված էին եվրոպական սիմֆոնիկ նվագախմբի կատարման համար, թուրք երաժիշտների գործերը գրված էին արևելյան նվա-

² «Լերլեբիջին» թուրքերը համարում են իրենց առաջին օպերետը:

գախմբի համար (ուղ, լավութա, ջութակ, դափ, թմբուկ և նմանօրինակ նվագարաններ):

Տ. Չուխաճյանի դաշնամուրային գործերից երկուսը՝ «Fantaisies orientale sur des motifs turc» (- 1, - 2) դարձան թուրքական պրոֆեսիոնալ գործիքային երաժշտության անդրանիկ նմուշները:

Թեև Տ. Չուխաճյանի կյանքն ու ողջ գործունեությունը ծավալվեց հայրենիքից հեռու՝ Կոստանդնուպոլսում³, նրան բախտ չվիճակվեց երբևէ լինել հայրենիքում, սակայն բացառիկ դեր ունեցավ հայ երաժշտության անդաստանում, մեծ և անգնահատելի վաստակ՝ հայրենական երաժշտական մշակույթի առջև: Տ. Չուխաճյանը դարակազմիկ երևույթ էր: Նրա թողած ժառանգության ուսումնասիրությամբ է տասնամյակներ շարունակ զբաղվում արդեն բեղմնավոր ճանապարհ անցած չուխաճյանագիտությունը՝ ներառելով ինչպես երաժշտագետների, այնպես էլ թատերագետների ու գրականագետների աննախադեպ քանակությամբ հետազոտություններ՝ մենագրություններ, բաժիններ մենագրություններում, գիտական հոդվածներ, աստենախոսություններ, ընդգրկելով լայնածավալ աշխարհագրություն՝ Հայաստան, Թուրքիա, Լիբանան, Իտալիա, ԱՄՆ, Եգիպտոս և այլն:

1987 թ. ապրիլին Հայաստանում լայնորեն նշվում է Տ. Չուխաճյանի ծննդյան 150-ամյա հոբելյանը: Այդ կապակցությամբ ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտը, Հայաստանի կոմպոզիտորների միությունը և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան գումարում են գիտական նստաշրջան: Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնում կայացած հոբելյանական երեկոյին բացման խոսքով հանդես է գալիս Նիկողոս Թահմիզյանը, իսկ կոմպոզիտորի կյանքի ու ստեղծագործության մասին զեկուցմամբ՝ Էդգար Հովհաննիսյանը:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտում այսօր էլ կարևորվում է կոմպոզիտորի ստեղծագործական ժառանգության ուսումնասիրության հարցը: 2014 թ. դեկտեմբերի 12-ին Արվեստի ինստիտուտը ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի աջակցությամբ գումարեց «Տիգրան Չուխաճյանի ստեղծագործությունը» գիտական նստաշրջանը, որի նպատակն էր համակողմանիորեն ներկայացնել կոմպոզիտորի ստեղծագործությունը և որոշարկել նրա տեղն ու դերը ինչպես հայկական, թուրքական, այնպես էլ՝ համաարևելյան երաժշտական մշակույթի անդաստանում: «Տիգրան Չուխաճյանի ստեղծագործությունը» գիտական նստաշրջանի մասնակիցներն ընդունեցին որոշում, որտեղ, մասնավորապես, ասվում էր, որ անհրաժեշտ է՝

³ Տ. Չուխաճյանը Կոստանդնուպոլսից բացակայել է 1862–1864 թվականներին, երբ երաժշտական կրթություն ստանալու նպատակով գտնվում էր Իտալիայում, իսկ 1896-ին ստեղծագործելու Զմյուռնիա, որտեղ էլ երկու տարի անց հեռացավ կյանքից:

1. իրականացնել Տ. Չուխաճյանի Երկերի լիակատար ժողովածուի ակադեմիական հրատարակությունը: Այսօր կատարողներին և երաժշտասերներին անմատչելի են կոմպոզիտորի երկերի նոտաները, որոնց կարող է ծանոթանալ միայն գիտնական հետազոտողը: Հասպաղելն անկարելի է, քանզի Չուխաճյանի ձեռագրերին՝ մատիտագիր պարտիտուրներին ու կլավիրներին սպառնում է ոչնչացման վտանգը. տասնամյակների ընթացքում խունացած՝ դրանք աստիճանաբար դառնում են դժվար ընթեռնելի:

2. Երևանում՝ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում, բեմադրել “Ձեմիրե”, “Արիֆի խորամանկությունը”, “Ինդիանա” և “Քյոսե Քեհյա” օպերաները, որոնք կդառնան թատրոնի խաղացանկի անբաժանելի մասը ու հրնթացս հյուրախաղերի՝ կհնչեն աշխարհի տարբեր բեմերում:

3. Երևանում կանգնեցնել Տիգրան Չուխաճյանի հուշարձանը:

4. Երևանում հիմնադրել Տիգրան Չուխաճյանի թանգարանը:

5. Զմյուռնիայից Երևան տեղափոխել և Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնում ամփոփել Տիգրան Չուխաճյանի աճյունը⁴:

1. Տ. Չուխաճյանը հայ դասական պրոֆեսիոնալ կոմպոզիտորական դպրոցի սկզբնավորողն է, ում երաժշտությունը նշանավորում է մի ամբողջ պատմական դարաշրջան և խոր հետք է թողել հայ դասական երաժշտության պատմության մեջ՝ զգալիորեն պայմանավորելով այդ արվեստի հետագա առաջընթացը:

Ինչ իմանար Տ. Չուխաճյանը, որ իր ծննդյան օրից 95 տարի անց՝ 1932 թվականին, իր հայրենիքում պետք է ստեղծվեր Հայաստանի կոմպոզիտորների միությունը, որը, անցնելով տասնամյակների միջով, իր շուրջը պետք է համախմբեր հայ պրոֆեսիոնալ կոմպոզիտորներին և այսօր բոլորեր իր ծննդյան 85-ամյակը:

Ինչ իմանար, որ հայ կոմպոզիտորները ստեղծագործելու էին թե՛ երաժշտական թատրոնի ասպարեզում, թե՛ սիմֆոնիկ ու կամերային երաժշտության ամենատարբեր ժանրերում և նրանց բազմաժանր երկերը հնչելու էին աշխարհի տարբեր երկրներում. դրա շնորհիվ հայ երաժշտությունը պետք է ձեռք բերեր միջազգային լայն ճանաչում:

Ինչ իմանար, որ Հայաստանի կոմպոզիտորների միությունը դառնալու էր ԽՍՀՄ կոմպոզիտորների առաջատար ջոկատներից մեկը. Խորհրդային Միությունում ԽՍՀՄ ժողովրդական արտիստի պատվավոր կոչման արժանացած ընդամենը 98 կոմպոզիտորից 10-ը լինելու էին հայեր, աճելու էր Միության հեղինակությունը և նրա կշիռը Հայաստանի մշակութային կյանքի առանց բացառության բոլոր ոլորտներում, երկրի առաջընթացի բազմաթիվ պրոբլեմների լուծման

⁴ Տե՛ս Տիգրան Չուխաճյանի ստեղծագործությունը, գիտական նստաշրջանի նյութեր, Երևան, 2015, էջ 199:

գործում:

Այդ ամենը հետագայում: Իսկ մինչ այդ... Իսկ մինչ այդ հայրենիքից հեռու՝ միայնակ Տ. Չուխաճյանը ստեղծագործում էր, ուղիներ հարթում, որոնցով հետագայում ընթանալու էր հայ կոմպոզիտորական արվեստի զարգացումը:

2. Տ. Չուխաճյանը հայ երաժշտական թատրոնի հիմնադիրն է. նրա գործունեությամբ պայմանավորվեց հայ երաժշտական թատրոնի սկզբնավորումը XIX դարի երկրորդ կեսին: Հրաշքով պահպանված ու մեզ հասած, դեռևս անտիպ ու Երևանի Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում գտնվող Տ. Չուխաճյանի դիվանում հանգրվանած ձեռագիր վեց օպերայով Չուխաճյանը հայ դասական երաժշտության մեջ արմատավորեց օպերային մի քանի ժանրեր: Դրանք են պատմառոմանտիկական «Արշակ Բ»-ը, կոմիկական օպերաների տրիադան՝ «Արիֆի խորամանկությունը», «Քյոսե Քեհյան» և «Լեբլեբիջի Հոր-հոր աղան», հայրենասիրական «Բնդիանան» և «Ջեմիրե» հեքիաթ-օպերան: «Լեբլեբիջի» ազդեցության տակ Քր. Կարա-Սուրբան ձեռնամուխ եղավ «Շուշանի» ստեղծմանը. թեև անավարտ՝ օպերայի ժանրն իր վրա հրավիրեց հայ կոմպոզիտորների ուշադրությունը, ուղի հարթեց Կոմիտասի անավարտ «Անուշից» դեպի Արմեն Տիգրանյանի «Անուշն» ու «Դավիթ Բեկը», Ալեքսանդր Սպենդիարյանի «Ալմաստը», Հարո Ստեփանյանի օպերաները...

Հայոց անդրանիկ «Արշակ Բ» օպերան (1868) Տ. Չուխաճյանը գրել է թատերական գործիչ, դրամատուրգ, բանաստեղծ, թարգմանիչ, գեղագետ, ուսուցիչ ու գրական քննադատ Թովմաս Թերզյանի լիբրետոյի⁵ հիման վրա, որը որպես գրական երկ հրատարակվել է Կ. Պոլսում (1871): Օպերան բեմադրվել է 1869-ին և ունեցել ընդամենը երեք ներկայացում:

Կոմպոզիտորի մահից հետո օպերան մոռացության է տրվում: Տասնամյակներ անց Չուխաճյանի երաժշտական ժառանգության առաջին լուրջ գիտական ուսումնասիրությունը ստանձնած Գեորգի Տիգրանովը, ծանոթանալով նրա արխիվային նյութերին, 1942-ին հայտնաբերում է օպերայի պարտիտուրը: Ալ. Սպենդիարյանի անվան օպերային թատրոնում Գ. Տիգրանովը՝ Հայկանուշ Դանիելյանի, Միրայել Թավրիզյանի, Արմեն Գուլակյանի և Մուշեղ Աղայանի ներկայությամբ դաշնամուրով նվագում է իր հայտնաբերած օպերան: Պարտիտուրը հանձնվում է Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնին, որը, չնայած պատերազմական ժամանակաշրջանի (1942–1943) դժվարություններին, ձեռնամուխ է լինում բեմադրության աշխատանքներին: Թատրոնը հրաժարվում է Թ. Թերզյանի լիբրետոյի գաղափարական ու դրամատուրգիական կոնցեպցիա-

⁵ «Արշակ Բ», թատերանուագ ի չորս հանդես, քերթուած Թովմաս Ռ. Թերզեանի, երաժշտութիւնը Չուխաճեան Տիգրանայ: Կ. Պոլիս, տպ. Քիրիշճեան և Ընկ., 1871: Ձեռագիր 24 թերթ, կից՝ մեքենագիր 58 թերթ, ԳԱԹ, Տ. Չուխաճյանի դիվան - 134:

յից. բեմադրության համար Արմեն Գուլակյանը գրում է նոր լիբրետո՝ ուժեղացնելով սյուժեի հայրենասիրական գիծը⁶: 1945-ին, Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման 25-ամյակի առթիվ, կոմպոզիտորի մահից ուղիղ 47 տարի անց Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի բեմում Միքայել Թավրիզյանի ղեկավարությամբ առաջին անգամ հնչում է “Արշակ Երկրորդը”՝ արժանանալով ջերմ ընդունելության: Ներկայացման մեջ ընդգրկվել էին հայ բեմի առաջատար ուժերը՝ Հայկանուշ Դանիելյանը (Օլիմպիա), Տաթևիկ Սազանդարյանը (Փառանձեմ), Շարա Տայյանը և Պավել Լիսիցյանը (Արշակ Երկրորդ), Ավագ Պետրոսյանը (Տիրիթ): “Արշակ Երկրորդի” բեմադրությունը դարձավ ոչ միայն Խորհրդային Հայաստանի, այլև Խորհրդային Միության մշակութային կյանքի առավել վառ ու նշանակալի իրադարձություններից մեկը՝ արժանանալով երկրի բարձրագույն պարգևի՝ Ստալինյան մրցանակի: Անդրանիկ բեմադրության օրվանից օպերան մշտական տեղ գտավ թատրոնի խաղացանկում: 1956-ի հունիսին հայ արվեստի տասնօրյակի շրջանակներում օպերան երկրորդ բեմադրությամբ ցուցադրվում է Մոսկվայի Մեծ թատրոնում: Վերջին գործողության մեջ ավելացավ “Արա Գեղեցիկ և Շամիրամ” պարային Ինտերմեդիան: “Արշակ Երկրորդի” երրորդ բեմադրությունը տեղի ունեցավ 1971-ին և ձոնվեց հայոց օպերային արվեստի ծննդյան 100-ամյա հոբելյանին: 1984-ին իրականացվում է “Արշակ Երկրորդի” նոր բեմադրությունը: 2001-ին Սան Ֆրանցիսկոյում տեղի է ունենում “Արշակ Բ”-ի համաշխարհային պրեմիերան՝ Լորիս Ճգնավորյանի ղեկավարությամբ 6 ներկայացումները, որոնցում ներգրավված էին ինչպես հայ (Հասմիկ Պապյան, Տիգրան և Հայկ Մարտիրոսյաններ), այնպես էլ օտար՝ ամերիկացի, ֆրանսիացի, վրացի, կանադացի, բուլղար, պարսիկ երգիչներ, որոնք երգում էին հայերեն: Բեմադրվում է օպերան հեղինակային մտահղացմամբ, հայերեն լեզվով:

2017-ը հոբելյանական է “Արշակ Երկրորդի” բեմական կյանքում: Իր 10-ամյակը բոլորեց օպերայի ներկա բեմադրությունը՝ Գեղամ Գրիգորյանի գեղարվեստական ղեկավարությամբ (2007):

Տասնամյակներ շարունակ “Արշակ Երկրորդը” ներկայանում է առանց Նախերգանքի: Մինչդեռ...

... 1865-ին Միլանից Պոլիս վերադառնալով՝ Չուխաճյանն իր հետ բերում է գրեթե ավարտված “Արշակ Բ” օպերան՝ բացառությամբ Նախերգանքի, որը հորինում է Կ. Պոլսում՝ բավական արտասովոր պայմաններում: Ամեն անգամ, երբ Չուխաճյանն այցելում էր Գևորգ Ապտուլլահին, լուսանկարիչը պահանջում էր, որպեսզի նա գրի Նախերգանքը: Չուխաճյանը խոստանում էր ավարտել Նախեր-

⁶ “Արշակ Երկրորդ” օպերայի համար Ա. Գուլակյանի գրած լիբրետոն տե՛ս Ա. Ա ս ս տ ր յ ա ն. “Արշակ Բ”. հայոց անդրանիկ օպերան, Երևան, 2006, Հավելված 2, էջ 194-266:

զանքն առաջիկայում՝ մի քանի օրից: Խոստանում էր և ... խոստումը հերթական անգամ դրժում: “Օր մը, Չուհաճեան դարձեալ գացած էր Ապտուլլահի լուսանկարչատունը, բայց այդ անգամ բան չըսուեցաւ իրեն Նախերգանքին մասին: Գէորգ Ապտուլլահ կը խնդրէ որ այդ գիշեր իրենց մնայ. Տիգրան կը համաձայնի: Գէորգ յօրինողին յատկացուած սենեակին մէջ, ուր դաշնակ մըն ալ կար, քանի մը տասնեակ երաժշտութեան թուղթեր, մատիտ, զմելի կը դնէ, որոնք նախապէս պատրաստած էր: Երբ Չուհաճեան քնանալու համար այդ սենեակը կ’առաջնորդուի՝ Ապտուլլահ կը յայտարարէ. Մինչեւ որ “Արշակ Բ”-ի Նախերգանքը չպատրաստես, բանտարկուած պիտի մնաս այս սենեակին մէջ: Ու դուռը վրայէն կողպելով, բանալին իր քով կը պահէ: Չուհաճեան ըսուածը կատակ կը կարծէ, ու հանգիստ մը կը քնանայ, սակայն առաւօտուն կը հասկնայ որ ըսուածը իրականութիւն է: Ճարահատ, կը սկսի իր բանտին մէջ պատրաստել Նախերգանքը: Ապտուլլահ իր ընտանիքին անդամներուն պատուիրած էր որ Չուհաճեանի նախաճաշը եւ կէս օրուան ճաշը կողովով մը վար իջեցնեն վերի յարկի պատուհանէն: Չուհաճեանի յատկացուած սենեակը տանը պարտէզին կողմն էր եւ ճաշը իրեն տրուած միջոցին, դրացի տուներէն օրիորդ մը կը տեսնէ բանտարկեալի մը այդ կերպով կերակրուիլը ու եղելութիւնը կ’երթայ կը պատմէ դրացի քանի մը օրիորդներու, որոնք հաւաքուելով՝ մինչեւ իրիկուն արգելք կ’ըլլան երգահանին, որ չի կրնար Նախերգանքը վերջացնել: Երեկոյեան, երբ Ապտուլլահ տուն կը վերադառնայ եւ տեսնելով որ Նախերգանքին կէտը միայն պատրաստ է, կը հրամայէ որ բանտարկութիւնը շարունակուի եւ երեկոյան ճաշն ալ նոյն կերպով կը տրուի: Չուհաճեան տեսնելով որ ազատում չկայ, մինչեւ որ գործը չաւարտի, այդ գիշեր մինչև արշալոյս աշխատելով կը վերջացնէ: Առաւօտուն Չուհաճեան կը պոռայ որ լրացուցած է Նախերգանքը: Ապտուլլահ դուրսէն կ’ուզէ դաշնակի վրայ լսել պատրաստուածը: Չուհաճեան ներսէն կ’աղաղակէ թէ պատրաստած է: Ապտուլլահ կը պնդէ որ պէտք է լսէ: Վերջապէս Չուհաճեան կը նուազէ Նախերգանքը: Ապտուլլահ դուռը կը բանայ ու կը շնորհաւորէ⁷:

Չուխաճյանը Նախերգանքը ձոնում է Հակոբ Պայանին. նրա ապարանքում էլ 1868-ի վերջերին առաջին անգամ հնչում է Նախերգանքը՝ իտալական քառյակի կատարմամբ, Չուխաճյանի ղեկավարությամբ. նվագահանդեսին ներկա էր բարձր դասին պատկանող ավելի քան 100 ընտանիք: Յնցող տպավորություն թողնելով ունկնդիրների վրա՝ Նախերգանքը մեծ ժողովրդականություն է ձեռք բերում՝ բազմիցս հնչելով Կ. Պոլսում, Զմյուռնիայում և Եվրոպայում՝ Վենետիկում, Նեապոլում, Վիեննայում (1873) և Փարիզում (1891)՝ տարածելով հեղինակի անունը:

⁷ Ն. Պ ե շ ի կ թ ա շ լ ե ա ն. Թատերական դէմքեր, Անթիլիաս, 1969, էջ 90:

Մասերոյի մահից հետո Չուխաճյանի սան, արևմտահայ ջութակահար, դաշնակահար, երգեհոնահար, կոմպոզիտոր, դիրիժոր, երաժշտական-հասարակական գործիչ Հարություն Գրիգորի Մինանյանը (1872–1939) 1900-ին Նախերգանքը վերածում է կլավիրի և իր սեփական միջոցներով տպագրում 700 օրինակ: Վաճառքից ստացված հասույթով 1907-ին Իզմիրի գերեզմանատանը Չուխաճյանի շիրմին կանգնեցվում է մեծ վարպետի մահարձանը. մարմարի վրա փորագրվում է Ալեքսանդր Փանոսյանի (Ալփասլան) հետևյալ քառատողը.

“Մեծ երգահան, պարծանք ազգին որ տարագիր՝
 Իզմիրի մէջ կնքեցիր կեանքդ անշքօրէն,
 Տուրտ ու լըռին դամբանիդ տակ խաղաղ հանգի՛ր,
 Որ երկնից մէջ անուշ երգերդ հոգիդ օրրեն”⁸:

2012-ի նոյեմբերի 21-ին, Տ. Չուխաճյանի ծննդյան 175-ամյա հոբելյանի շրջանակներում Արամ Խաչատրյան համերգասրահում տեղի ունեցավ համերգ, որի ծրագրում տեղ էին գտել Չուխաճյանի ստեղծագործությունները:

Համերգը բացառիկ էր իր նշանակությամբ՝ հրնթացս համերգի տեղի ունեցավ “Արշակ Բ” օպերայի Նախերգանքի հայաստանյան պրեմիերան՝ ունկնդիրներին ներկայացնելով մինչ այդ անձանոթ Չուխաճյան-սիմֆոնիստին: Համերգի վերջում հնչեց Տ. Չուխաճյանի “Ձեյթունցիների քայլերգը”՝ սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ: Նշենք, որ “Ձեյթունցիների քայլերգը”, որը կյանքի կոչվեց 1862-ի Ձեյթունի դուրսգնամարտի կապակցությամբ Չուխաճյանի և զեյթունցի հերոս բանաստեղծ Հարություն Չագրյանի համագործակցությամբ, արժանացել է հայ և օտարազգի կոմպոզիտորների ուշադրությանը: Մ. Եկմայանը քայլերգի հիման վրա արական երգչախմբի համար ստեղծել է a cappella խորխոս խմբերգը՝ “Կեցցե Ձեյթուն” վերնագրով⁹, իսկ 1974 թ. Ալեքսանդր Հարությունյանը դաշնամուրի, լարային նվագախմբի և հարվածայինների համար գրված “Մեր հին երգերը” ռապսոդիայում, ի թիվս այլ երգերի (“Բլբուլն Ավարայրի”, “Արաքսի արտասուքը”), օգտագործել է Չուխաճյանի քայլերգը՝ ստեղծելով սիմֆոնիկացված վարիացիաների նմուշ: Գ. Կազաչենկոն երգի մեղեդին օգտագործել է մեներգչի, երգչախմբի և սիմֆոնիկ նվագախմբի համար գրված առաջին “Հայկական սյուիտում”, իսկ Միխայիլ Իպոլիտով-Իվանովը երգի մեղեդին 1894 թ. օգտագործել է օր. 10 “Կովկասյան էսքիզներ” - 1 սիմֆոնիկ սյուիտի առաջին շարքում՝ որպես “Մարդարի երթի”

⁸ Վ. Ջ ա ր դ ա ր յ ա ն. Հիշատակարան: Տարեգիրք 1941 տարուով, Գահիրե, 1940, էջ 75:

⁹ Որպես վերնագիր կոմպոզիտորն ընտրել է քայլերգի բանաստեղծական տեքստի վերջին քառյակի առաջին երկու բառերը, որը, իրականում, երգի իսկական ապոֆեոզն է, տրամաբանական շեշտը:

գլխավոր թեմա¹⁰:

“Արիֆի խորամանկությունը”՝ հայկական առաջին կոմիկական օպերան, գրված ըստ Գոգոլի “Ռևիզորի”, բեմադրվել է 1872-ի դեկտեմբերի 9-ին Կ. Պոլսում և նշանավորել թուրքական երաժշտական թատրոնի սկզբնավորումը: Սա առաջին պրոֆեսիոնալ օպերան էր ամբողջ Մերձավոր Արևելքում: Հայ երաժշտական իրականության մեջ առաջին դեպքն էր, երբ բեմ էր բարձրանում հայ կոմպոզիտորի օպերան՝ հայ արտիստների կատարմամբ: “Արիֆն” ունեցավ շոնդալից հաջողություն՝ մեծ հոչակ բերելով հեղինակին: Առաջնախաղի ժամանակ գլխավոր հերոսուհի Մերիեմի դերերգը կատարեց օսմանյան բեմի անդրանիկ պրիմադոննա Շազիկ Բոյլույանը, իսկ Արիֆի երգամասով հանդես եկավ լիբրետտոյի հեղինակ Հովհաննես Աճեմյանը:

“Արիֆի” հետ է անմիջականորեն կապված Տ. Չուխաճյանի կյանքի հետևյալ դրվագը. “Չէր կրնար մոռնալ, որ այնքան դափնիներ խլած և մասնագետ երաժիշտներե եռանդով ծափահարված էր, արժանանալով անոնց արդարացի գնահատման: Շատ անգամ խանդավառությամբ կպատմեր յուր աշակերտաց, թե 1877-ի արվեստահանդեսը տեսնելու առթիվ Վիեննա գտնված ատեն փորձեր էր անգամ մը ցույց տալ տնօրենին յուր անդրանիկ գուսաներգությունն եղող “Արիֆին Հիյլեսի”ի ձայնագրյալ տետրակը, հասկնալու համար թե այս տեսակ գործ մը որչափ ժամանակեն կարելի է ներկայացնել եվրոպական թատերաբեմերու վրա, կազմ ու պատրաստ վիճակի մեջ դնելով բոլոր դերակատար գուսանները, առ որ կպատասխանե ցուցահանդեսի տեսուչը թե հազիվ կրնա վեց ամիսեն պատրաստել. Չուխաճեան կհայտնե թե ինքը երեք ամիսեն պատրաստած և ներկայացուցած իսկ է Պոլսո թատերաբեմերու վրա. տնօրենը չկրնալով զսպել իր հիացումը, կսե լակոնական ոճով մը՝ “Դուք հայ էք, կրնաք ընել”:

Այս չորս բառերը որքան մեծ արժեք ունենին այնպիսի մարդու մը բերնին մեջ, որ Եվրոպայի լուսաշողշող հրապարակին վրա տարիներու փորձառությունն ունեցած էր ամեն տեսակ գեղարվեստի և գիտությանց մեջ խորասուզվելով շարունակ. ուստի բնական էր, որ գիտակից քննադատի մը այս թանկագին գնահատությունը շատ խորհրդավորություն ներգործեց հայ քոմպոզիտորին վրա, որն որ գոհ չըլլալով լոկ խոսքեն, կխնդրե արվեստահանդեսի տեսուչեն որ գրավոր կերպով բարեհաճի վավերացնել յուր այդ պատվաբեր վկայությունը, զոր անմիջապես երկտողիվ մը կհաստատե ու ստորագրելով կուտա այդ վկայագիրն: Կրնա երևակայել մեծանուն երաժշտապետին ուրախությունը ձեռք ձգած ըլլա-

¹⁰ Համաշխարհային հոչակ վայելող “Կովկասյան էսքիզները” կատարել են աշխարհի հեղինակավոր կոլեկտիվներ, այդ թվում՝ Լոնդոնի “Ֆիլհարմոնիա” նվագախումբը Նիկոլայ Մալկոյի ղեկավարությամբ, Ուկրաինայի ազգային սիմֆոնիկ նվագախումբը Արթուր Ֆազենի ղեկավարությամբ և այլն:

լուն համար այդ թղթին կտորրք, գոր յուր ամեն փառքերեն ավելի համարելով գուրգուրանոք պահած էր մինչև կենաց վախճանը, երբեմնակի ցույց տալով իր բարեկամաց և հազվագյուտ մասունքի մը պես զետեղելով վերստին յուր հուշատետրին մեջ”¹¹:

Հայ բեմի մեծագույն կատակերգակ, կատակերգության և ողնիլի վարպետ, կատակերգերի հեղինակ և կատարող Գարեգին Ռշտունու լիբրետոյի հիման վրա գրված “Քյոսե Քեհյա” օպերայի պրեմիերան տեղի է ունեցել 1875-ի հոկտեմբերի 7-ին: Օպերայի ներկայացումները չեն ունեցել “Արիֆի” հաջողությունը:

“Արշակ Բ”-ի ստեղծման մեկդարյա հորեյանի կապակցությամբ 1968-ին Բեյրութում բեմադրվել է “Քյոսե Քեհյայի” հայացված տարբերակը՝ “Չվարթը”, որի բեմադրությունն իրականացրել են Վահրամ Փափազյան թատերախումբն ու Հ. Ե. Ը. երգչախումբը: 2003-ին “Չվարթը” բեմ է բարձրանում Փասադենայի քաղաքային հանդիսասրահում՝ Գլենդելի “Lark” երաժշտական ընկերակցության խմբավար Վ. Պարսունյանի և ՀԲԸՄ “Արտավազդ” թատերախմբի ղեկավար Գ. Սաթանյանի համատեղ ջանքերով:

Դերասան, երգիչ, դրամատուրգ, թարգմանիչ և ուսուցիչ Թագվոր Նալյանի լիբրետոյի հիման վրա գրված “Լեբլեբիջի Հոր-հոր աղայի” պրեմիերան տեղի ունեցավ 1875-ի նոյեմբերի 5-ին՝ արձանագրելով շոնդալից հաջողություն: Գլխավոր դերերգերի կատարմամբ հանդես են գալիս Շազիկը (Ֆաթինե), Հովհաննես Աճեմյանը (Խուրշիդ), Խաչիկ Փափազյանը (Սանսար-Հասան), Գարեգին Ռշտունին (Ճինկյոզ), Թագվոր Նալյանը (Հոր-հոր աղա) և այլք: “Լեբլեբիջին” դառնում է Չուխաճյանի ամենասիրված, տարածված և ժողովրդականացած օպերան: Չուխաճյանն անմահանալու էր հենց այս օպերայով: “Լեբլեբիջին”, թերևս, այն եզակի օպերաներից է, որն ունի բացառիկ ընդգրկուն աշխարհագրություն և ներկայացվել է աշխարհի բազմաթիվ լեզուներով, այդ թվում՝ թուրքերեն, հունարեն, գերմաներեն, հայերեն, ռուսերեն, բուլղարերեն, ֆրանսերեն: Օպերան բազմիցս ծափահարվել է Մերձավոր Արևելքում՝ Լիբանանում, Սիրիայում, Անդրկովկասում (Բաքվում և Թիֆլիսում), Եվրոպայում՝ Ֆրանսիայում, Հունաստանում, Կիպրոսում, Բուլղարիայում, Ռումինիայում, Աֆրիկայում՝ Եգիպտոսում, ԱՄՆ-ում, Կանադայում, նաև՝ Թուրքիայում և Հայաստանում:

Տևական ընդմիջումից հետո 2014 թ. հունվարի 25-ին հայրենիք կրկին վերադարձավ Ս. Չուխաճյանի “Կարինե” օպերետը՝ հայացված “Լեբլեբիջի Հոր-հոր աղա” կոմիկական օպերան, որի փայլուն պրեմիերան տեղի ունեցավ Երևանի Հ.

¹¹ Տե՛ս Արիստակես քհնա շիսարլեան. Պատմութիւն հայ ձայնագրութեան եւ կենսագրութիւնք երաժիշտ ազգայնոց (1768–1909), Կ. Պոլիս, 1914, էջ 159–162:

Պարոնյանի անվան երաժշտական կոմպոզիայի պետական թատրոնի բեմում¹²:

“Կարինեի” բեմադրությունը Երևանի Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմպոզիայի պետական թատրոնում իր պատմաքաղաքական ու ռազմավարական նշանակությամբ (հաճախ ենք մենք բողոքում, որ թուրքերն ու ադրբեջանցիները յուրացնում, սեփականաշնորհում են մեր արժեքները՝ միաժամանակ մոռանալով՝ մենք ինքներս պետք է տեր կանգնենք դրանց) և պրոֆեսիոնալ բարձր մակարդակով դարձավ երևույթ Հայաստանի մշակութային կյանքում, և ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով՝ ՀՀ Նախագահի 2014 թվականի մրցանակը շնորհվեց “արվեստի բնագավառում՝ Երվանդ Ղազանյանին, Լալա Պուպուզյանին, Ավետիք Խալաթյանին, Արսեն Գևորգյանին և Վահագն Մարգարյանին՝ Տիգրան Չուխաճյանի “Կարինե” օպերետի համար”:

Կոմիկական օպերաների տրիադայից հետո Չուխաճյանը ստեղծում է հայրենասիրական օպերան՝ “Բնդիանան” (լիբրետոն, ըստ թուրքական նոր գրականության ներկայացուցիչ Աբդյուլհակ Համիդի “Հնդկուհին” ստեղծագործության, կազմել էր Հովսեփ Եազրճյանը): 1870-ականների Թուրքիայում կոմպոզիտորը հայրենասիրական խոշոր կտավի օրս-ում պատմեց ոչ թե ի՛ր հայրենիքի և ժողովրդի, այլ՝ հեռավոր Հնդկաստանի ու հնդիկների մասին՝ նրանց իղձերը նույնացնելով իր և իր հայրենակիցների համար թանկ ու նվիրական հայրենիքի մասին երազանքների հետ: “Բնդիանան” երբեք բեմ չբարձրացավ՝ ո՛չ հեղինակային մտահղացմամբ և ո՛չ էլ գոնե խմբագրված ձևով: Մինչդեռ սա Չուխաճյանի լավագույն ստեղծագործություններից է, նրա հասուն շրջանի կատարյալ գործերից:

Հայոց առաջին-հեքիաթ օպերան՝ “Չեմիրեն”, գրված ըստ հուշարար, թատերագիր և թարգմանիչ Տիգրան Գալեմճյանի լիբրետոյի, կոմպոզիտորի կենդանության օրոք Պոլսում ներկայացվել է ութ անգամ՝ 1891-ին: Ոգևորված օպերայի հաջողությունից՝ “Չեմիրեն” Փարիզում բեմադրելու մտադրությամբ 1891-ի ապրիլին Չուխաճյանը մեկնում է Ֆրանսիա: Փարիզ հասնելուն պես Չուխաճյանն սկսում է բանակցությունները թատրոնների տնօրենների հետ: Շուտով պարզվում է, որ ձեռքի տակ եղած համեստ միջոցներով անհնար է օպերայի բեմադրությունը. նրանք պահանջում են մեծ գումարներ, և կոմպոզիտորի ոգևորությունը փշրվում է: Բարեբախտաբար ֆրանսահայ մեծահարուստ Գաբրիել Էզնայանը, կոմպոզիտորի կատարմամբ ծանոթանալով օպերայի երաժշտությանը և գիտակցելով իր հայրենակցի օպերան Փարիզում ներկայացնելու կարևորությունը, հանձն է առնում հոգալ բեմադրության հետ կապված ծախսերը: Բայց ... հանկարծամահ է լինում Էզնայանը՝ իր հետ գերեզման տանելով “Չեմիրեի” փարիզ-

¹² “Կարինեի” պրեմիերայի մասին տե՛ս Ա. Ասատրյան. Տիգրան Չուխաճյանի “Կարինեն” վերադարձով, որ այլևս չհեռանա.– “Հայաստանի Հանրապետություն”, 27. III. 2014:

յան բեմադրության վերջին հույսը: Փարիզյան ամիսները սակայն անպտուղ չէին՝ Չուխաճյանը ծանոթանում է “Splendid Tavern”-ի սիմֆոնիկ նվագախմբի դիրիժոր Ալտերի հետ. վերջինս իր համերգներից մեկի ծրագրում ընդգրկում է “Արշակի” նախերգանքը և “Fantaisies Orientale”-ը, որոնք արժանանում են ունկնդիրների ջերմ ընդունելությանը, իսկ հեղինակին բերում “Թուրքական Օֆենբախ” գնահատականը: Հուսահատված ու հիասթափված Չուխաճյանը բռնում է տունդարձի ճամփան: Շուտով՝ 1894-ին, “Զեմիրեն” բեմադրվում է Կ. Պոլսում: 1966-ին Երևանում Յուրի Դավթյանը՝ Գեորգի Տիգրանովի և Վլադիլեն Բայյանի նախաձեռնությամբ, իրականացնում է “Զեմիրենի” ձայնագրությունը: Օպերայի արխիվային ձեռագրերի հիման վրա Վահրամ Դարբասյանը լիբրետոն իտալերենից ու ֆրանսերենից թարգմանում է հայերեն, որից հետո Վահան Հարությունյանը դա վեր է ածում չափածո տեքստի: Բորիս Մակիլարին ստեղծում է նոր գործիքավորում: Ներգրավվում են Հայաստանի առաջատար երգիչները՝ Գոհար Գասպարյանը, Նար Հովհաննիսյանը, Միհրան Երկաթը, Արշավիր Կարապետյանը, Տիգրան Լևոնյանը, Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի երգչախումբը (խմբավար՝ Ռուբեն Այվազյան):

“Զեմիրենի” գրեթե 3/4-ը ընդգրկող ձայնագրությունը ճանաչվում է տարվա լավագույն ձայնագրություն ու արժանանում ԽՍՀՄ Համամիութենական ռադիոյի մրցանակին: Հետագայում ձայնագրության հիման վրա ստեղծվում է ռադիոմոնտաժ, որը տասնամյակներ շարունակ հեռարձակվում էր Մոսկվայի ու Երևանի ձայնասփյուռներով: Ոգևորված օպերայի հաջողությունից՝ որոշվում է այն բեմադրել Երևանի օպերային թատրոնում...

2008-ին տեղի ունեցավ “Զեմիրենի” ամերիկյան պրեմիերան՝ Վաչե Պարսումյանի և Գրիգոր Սաթամյանի ջանքերով:

Ու այդպես էլ սպասում է “Զեմիրեն” իր բեմելին՝ Երևանում:

3. Տ. Չուխաճյանը նախանշեց հայկական բալետի զարգացումը. նրա օպերաների բալետային տեսարանները նախակարապետներ դարձան Ա. Խաչատրյանի “Գայանեի” ու “Մպարտակի”...

4. Տ. Չուխաճյանի երաժշտական գործունեության կարևոր բաղկացուցիչն էր թատերական պիեսների համար գրված երաժշտությունը, ներկայացումների երաժշտական ձևավորումը, որը մեծապես նպաստել է բեմական ներկայացումների հաջողությանը, իթանել արևմտահայ թատրոնի առաջընթացը. “70-ական թվականներին գրեթե ոչինչ չի խաղացվել առանց Չուխաճյանի երաժշտական մասնակցության”¹³:

Այդ ուղղությունը ևս կենսունակ դարձավ հայ պրոֆեսիոնալ կոմպոզիտորա-

¹³ Հ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Հայ թատրոնի պատմություն. XIX դ., Երևան, 2010, էջ 326:

կան արվեստում. թատերական ներկայացումների համար հայ կոմպոզիտորների գրած երաժշտությունը շատ դեպքերում նույնպես պետք է զգալիորեն նպաստեր ներկայացումների հաջողությանը, իսկ երբեմն էլ՝ անջատվելով ներկայացումից, պետք է ապրեր իր ինքնուրույն համերգային կյանքով: Բավական է նշել Արամ Խաչատրյանի հանրահայտ Վալսը “Դիմակահանդեսից” կամ էլ՝ Գ. Մունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնում 1961-ին Վ. Աճեմյանի բեմադրությամբ Վ. Սարոյանի “Իմ սիրտը լեռներում է” ներկայացման համար Առնո Բարաջանյանի գրած երաժշտությունը, որը ծնվում է գլխավոր հերոսի՝ Մեկ-Գրեգորի շեփոթից:

Էլ չենք ասում կինոերաժշտության մասին, որի հիմքերը դրվեցին 1936-ին:

5. Ծանրակշիռ է Չուխաճյանի սիմֆոնիկ ժառանգությունը¹⁴: Հայկական դաշնամուրային կոնցերտի նախատիպով՝ դաշնամուրի և նվագախմբի համար գրված “Perpetuum mobile”-ով, սիմֆոնիկ նվագախմբի համար գրված երկերով (այդ թվում՝ “Արևելյան ֆանտազիա”, “Արևելյան պար”, “Քայլերգ շնորհակալության”, “Մեծ պարսկական քայլերգ” (երկու տարբերակներ), Մեծ պոպուրի “Լեբլեբիջի Հոր-հոր աղա” օպերայի մոտիվներով, Պոպուրի “Էբուդիա և Ջեմիրե” օպերայի մոտիվներով, “Ջեմիրե” ֆանտազիա, “Հայկական եղանակ”, “Մեղեդի”, “Քայլերգ” և այլն), Չուխաճյանը դրեց հայկական սիմֆոնիկ երաժշտության հիմքերը:

Տ. Չուխաճյանը սիմֆոնիկ նվագախմբի համար “Պարսկական քայլերգ” ստեղծած հայ առաջին կոմպոզիտորն է: Ի դեպ, այդ ժանրը հետագայում կենսունակ դարձավ հայ դասական երաժշտության մեջ: Հիշենք թեկուզ Ալ. Սպենդիարյանի անկրկնելի “Պարսկական քայլերգն” “Ալմաստից” և Ա. Տիգրանյանի “Պարսկական քայլերգը” “Դավիթ Բեկից”:

Ցավոք, այսօր կոմպոզիտորի սիմֆոնիկ ստեղծագործությունները չեն հնչում, մինչդեռ դրանք պետք է հաստատուն տեղ գրավեն թե՛ Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ և թե՛ Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբերի նվագացանկերում ու պրոպագանդեն հայ առաջին մեծ սիմֆոնիստի երաժշտությունը նաև արտասահմանում:

Տ. Չուխաճյանի ժառանգության կարևոր էջն են փողային նվագախմբի համար գրված չորս քայլերգը, որոնք կոմպոզիտորի ղեկավարությամբ բազմիցս հնչել են Կ. Պոլսի զրոսայգիներում¹⁵:

¹⁴ Հայ երաժշտագիտության մեջ Տ. Չուխաճյանի սիմֆոնիկ ստեղծագործության ուսումնասիրությանն է առաջին անգամ մեր գիտական ղեկավարությամբ անդրադարձել ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հայցորդ, Պ. Չայկովսկու անվան միջնակարգ երաժշտական մասնագիտական դպրոցի տնօրեն Մարտուն Կոստանդյանը:

¹⁵ Ն. Թ ա հ մ ի գ ե ա ն. Տիգրան Չուխաճեան. կեանքը եւ ստեղծագործութիւնը, Փաստենա, 1999, էջ 35:

6. Տ. Չուխաճյանն է հեղինակել հայկական ռոմանսի անդրանիկ նմուշները: Ճիշտ 155 տարի առաջ, Կ. Պոլսում “Քնար հայկականի” 1862-ի մայիսի 30-ի համարում տպագրվում է “Գարուն” ռոմանսը՝ հայ նոր քնարերգության հիմնադիր Մկրտիչ Պեշիկթաշյանի համանուն քերթվածի հիման վրա, որի առաջին կատարողն էր Վենետիկի երաժշտանոցի շրջանավարտ, բարձրագույն մասնագիտական կրթություն ստացած արևմտահայ առաջին երգիչ, տենոր Հովհաննես Աճեմյանը: Դրա մասին է վկայում Տիգրան Արփիարյանն իր հուշագրության մեջ. “Իրիկուն մը, Պեշիկթաշյանի մահեն (Մ. Պեշիկթաշյանը վախճանվել է 1868 թ. նոյեմբերի 28-ին – Ա. Ա.) քանի մը տարի առաջ, ընթրիքի հրավեր կար բարեկամի մը տունն, ի Բանկայթի: Բանաստեղծը խոնջ ու տկար, կանուխեն հասած էր ու պատուհանին մոտ ընկողմանած՝ կը դիտեր վերջալույսը, որ կես մութի մեջ թողած էր սրահը: Ներս կը մտնե Աճեմյան ու չուզելով խոսվել Պեշիկթաշյանի խոկանքը, կ’անցնի դաշնակին առջև ու կ’սկսի մեղմիվ նվագել ու երգել Գարունը: Չուխաճյան, ինքն ալ շատ երիտասարդ այն ատեն, ամռան իրիկուն մը, ի դարձին Վոսփորե, նավակին մեջ՝ դեռատի արվեստագետի մը ու սիրող սրտի մը բռնոր ներշնչումովը՝ հորինած էր եղանակն այդ երգին, երգ ու եղանակ՝ բանաստեղծին երգած առավոտյան հովին պես անուշ, աղու և սրտագին, անոր թռչնոց երգին պես ու վտակին մրմունջին պես ակնակիտ ու հանդարտիկ: Պեշիկթաշյան կը ցնցվի, կը դարձունե աչքերը բնության հեռապատկերեն դեպի սրահին խորը, դաշնակին ու երգչին կը հառե անշարժ, գրեթե ցնորական երևույթով մը, ճակատը ձեռքին մեջ առած, իր հիվանդ կուրծքին բռնոր հեքով ու խոսվյալ հոգվույն բռնոր վրդովումովը հետևելով այն գործիքին ու ձայնին, որ կենդանություն կուտային իր երգին:

Մութը իջած էր արդեն սրահին մեջ, երբ վերջին վանգյունը կը թոթոա երիտասարդ արվեստագետին մատներուն տակ ու վերջին շեշտը կը մարի իր շրթներուն վրա: Ու այդ մութին մեջ, ուր երկու բարեկամները դեռ չէին խոսած, կը լսվի բանաստեղծին գոս ձայնը.

– Չայնդ դալար...¹⁶:

Հայկական ռոմանսի անդրանիկ նմուշներից է նաև Վիկտոր Հյուգոյի խոսքերով (հայերեն թարգմանությունը՝ Օննիկ Երկանյանի) “Լոռա” ռոմանսը, որի երաժշտական նյութը Տ. Չուխաճյանն օգտագործել է “Զեմիրե” օպերայի երկրորդ գործողությունից -10 Էբուդիայի, Զեմիրեի և Ռեբիայի տերցետից Զեմիրեի արիոգոյում՝ տոնայնական փոփոխությամբ¹⁷: Ռոմանսը տպագրվել է Կ. Պոլսում, 1880-ին, “Նուագք Հայկականը”-ում, ապա՝ 2005-ին, Կահիրեում: 1914-ին Փարիզում

¹⁶ Մ. Պեշիկթաշյան. Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1987, էջ 530:

¹⁷ Տե՛ս Ա. Ասատրյան. Տիգրան Չուխաճյանի երաժշտական թատրոնը, Երևան, 2011, էջ 417:

լույս է տեսել “Լոռայի” ֆրանսերեն տարբերակը՝ “Laura”, որը 1994-ի հուլիսի 6-ին Կահիրեում Հայ գեղարվեստասիրաց միության Թեքեյան սրահում ի շարս Չուխաճյանի՝ օտար լեզուներով հորինած մեներգերի կատարել է եզրապատացի երիտասարդ մեցցո-սոպրանո Հալա Էլ-Շապուրին՝ Հայկ Ավագյանի դաշնամուրային ընկերակցությամբ:

7. Տ. Չուխաճյանի անվան հետ է կապվում հայկական դաշնամուրային երաժշտության սկզբնավորումը¹⁸: Լինելով փայլուն դաշնակահար՝ նա առանձին գուրգուրանք է տաժել դեպի գործիքը, որն ուղեկցեց նրան ողջ կյանքում. որպես դաշնակահար ծավալեց համերգային գործունեություն, զբաղվեց մանկավարժությամբ՝ կրթելով բազմաթիվ պատանիների, ովքեր հետագայում դարձան երաժիշտ-կատարողներ:

Տ. Չուխաճյանը գրեց հայ իրականության մեջ դաշնամուրային առաջին օպերները: Նրա դաշնամուրային գործերից են Ժանրային-կենցաղային բնույթի պարային պիեսները (մագուրկա, պոլկա, գավոտ, կադրիլ, տարանտելլա և այլն), վիրտուոզ երկերը [այդ թվում՝ La lyre orientale կապրիսը, Cascade de Couz էքսպրոսմտը, Թուրքիո Հայոց Պատրիարք Ներսես Վարժապետյանի մահվան առիթով հորինված “Արտօսը ի շիրիմ” մահանվագը՝ հայոց անդրանիկ դաշնամուրային Marche funebre-ն, “Պատրանքներ” ֆանտաստիկ վալսը (Grande Valse Fantastique “Illusions”) և այլն], տրանսկրիպցիաները սեփական օպերաներից: Տ. Չուխաճյանի դաշնամուրային ֆուգաները նշանավորեցին հայկական պոլիֆոնիկ երաժշտության ծնունդը:

Տասնամյակներ շարունակ Չուխաճյանի կամերային ստեղծագործությունները չէին հնչում: Այս տեսակետից աննախադեպ էր 2012 թ. դեկտեմբերի 12-ին ՀՀ - ԳԱԱ նիստերի դահլիճում տեղի ունեցած “Տիգրան Չուխաճյանի կամերային ստեղծագործությունը” համերգը, որի ընթացքում Հայաստանում առաջին անգամ, գիտական աշխատանքով զբաղվող երիտասարդ երգիչների ու դաշնակահարների կատարմամբ ներկայացվեցին էջեր Տ. Չուխաճյանի կամերային ստեղծագործությունից՝ մեներգեր ու դաշնամուրային պիեսներ¹⁹: Համերգը հիշեցրեց Ֆելիքս Մենդելսոնին. 1829-ին Բեռլինում 20-ամյա Մենդելսոնի ղեկավարությամբ, 100-ամյա մոռացությունից հետո կատարվեցին Բախի “Չարչարանքներն ըստ Մատթեոսի”, որից հետո վերակենդանացավ հետաքրքրությունը Բախի ան-

¹⁸ Տ. Չուխաճյանի դաշնամուրային ստեղծագործության ուսումնասիրությանն է մեր գիտական ղեկավարությամբ անդրադարձել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի դոցենտ Աննա Ադամյանը (Ա. Ադամյան. Տիգրան Չուխաճյանի դաշնամուրային ստեղծագործությունը, Երևան, 2015):

¹⁹ Տե՛ս Ա. Ասատրյան. Տիգրան Չուխաճյանի կամերային ստեղծագործության վերածնունդը. – ՊԲՀ, 2012, - 3, էջ 264–266:

ձի ու ստեղծագործության հանդեպ: Եվ իսկապես. երիտասարդ արվեստագետների կատարմամբ համերգով ևս հետաքրքրություն առաջացավ Տ. Չուխաճյանի մինչ այդ անհայտ դաշնամուրային ստեղծագործության հանդեպ. հայկական դաշնամուրային առաջին պիեսներն այսօր պարտադիր մասն են ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու, միջազգային մրցույթների դափնեկիր, տաղանդավոր դաշնակահարուհի Լիլիթ Արտեմյանի նվագացանկի:

Իսկ 2012-ի տարեմուտին տաղանդավոր դաշնակահար, Երևանի պետական կոնսերվատորիայի դաշնամուրային ֆակուլտետի դեկան, միջազգային մրցույթների դափնեկիր, ՀՀ վաստակավոր արտիստ, չուխաճյանական արվեստի նվիրյալ Արմեն Բաբախանյանի կատարմամբ լույս տեսավ “Հայ դաշնամուրային երաժշտության անթոլոգիայի” առաջին հատորը, որի առաջին խտասալիկում տեղ են գտել Տ. Չուխաճյանի դաշնամուրային պիեսներից տասը. նրա ջանքերով դրանք տեղ գտան նաև Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ուսումնական ծրագրում:

8. Տ. Չուխաճյանը հայ երաժշտական թատրոնի առաջին կազմակերպիչն էր: Հայկական առաջին օպերաների ստեղծումն ուղեկցվեց երաժշտական թատրոնի հիմնարկմամբ: Ազգային օպերային թատրոնի անհրաժեշտությունը Տ. Չուխաճյանը գիտակցեց դեռևս 1870-ականներին: Տ. Չուխաճյանի և Տ. Գալեմճյանի ղեկավարությամբ ստեղծված “Օսմանյան օպերային թատերախումբը” հայ իրականության մեջ բացառապես հայ արտիստներից կազմված անդրանիկ երաժշտական թատերախումբն էր (թատերախումբն առաջինն էր ողջ Մերձավոր Արևելքում), որի ձեռքում հայտնվեց երաժշտական ներկայացումներ բեմադրելու մենաշնորհը: Մերձավոր Արևելքում առաջին անգամ հայի հեղինակությամբ և ղեկավարությամբ, բացառապես հայ արտիստների մասնակցությամբ բեմադրվում են օպերաներ: Ըստ Չուխաճյանի՝ խմբի խաղացանկը պետք է բաղկացած լիներ մի կողմից՝ արևմտաեվրոպական հեղինակների (մասնավորապես՝ Օֆենբախ, Դոնիցետտի) օպերետներից, մյուս կողմից՝ երաժշտական թատրոնի համար հայ կոմպոզիտորների գրած օպերաներից, տվյալ դեպքում՝ իր երեք կոմիկական օպերաներից: Խումբը պետք է բեմադրություններով հանդես գար տեղում, նաև մեկնեք հյուրախաղերի երկրից դուրս՝ տարածելով հայկական օպերային արվեստը: Չուխաճյանի թատերախմբի ավանդույթները հետագայում շարունակում է կոմպոզիտորի առաջարկությամբ թատերախմբի ղեկավարությունը ստանձնած դերասան, ռեժիսոր, թատերական գործիչ Սերովբե Պենկյանը. խմբի երաժշտական մասի ղեկավարը (նվագավար, խմբավար) Չուխաճյանն էր:

Բացառիկ էր Պենկյանի թատերախմբի դերը հայ երաժշտական թատրոնի զարգացման գործում, որն արգասաբեր գործունեություն ծավալեց թե՛ Կ. Պոլ-

սում, թե՛ Կ. Պոլսից դուրս՝ Ադրիանապոլսում և Զմյուռնիայում: Հայ երաժշտությունը հնչեցրեց Թուրքիայի սահմաններից դուրս՝ Հունաստանում և Եգիպտոսում: Հետագայում այս գործունեությունը շարունակեց թատերական գործիչ, դերասան և ռեժիսոր Արշակ Պենկյանը՝ սկզբում ղեկավարելով «Վեսելո» թատերախումբը, իսկ 1908-ին Կ. Պոլսում հիմնադրելով Օսմանյան երաժշտական թատրոնը՝ 40 հոգուց բաղկացած օպերետային խումբը, որը 1910-ի դեկտեմբերի 5-ին բեմադրեց «Լեբլեբիջին»: Եվ, վերջապես, Տ. Չուխաճյան – Ս. Պենկյան – Ա. Պենկյան թատերախմբերի ստեղծագործական ավանդույթները գտան իրենց տրամաբանական շարունակությունը. այս անգամ՝ մայր հայրենիքում: ՀԽՍՀ – Ժողովրդի 1932-ի մայիսի 13-ի որոշման համաձայն 1933-ի հունվարի 20-ին Երևանում Ալ. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի բեմադրությամբ իր դռները բացեց օպերայի և բալետի պետական թատրոնը, որն այս տարի բոլորում է իր ստեղծման 85-ամյակը ...

Ու ես հավատում եմ, որ՝

1. պետական աջակցությամբ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը վերջապես կիրականացնի Տ. Չուխաճյանի Երկերի լիակատար ժողովածուի ակադեմիական հրատարակությունը: Չէ՞ որ դեռևս 1973-ին մշակված «Արվեստի ինստիտուտի գիտահետազոտական աշխատանքների քսանամյա հեռանկարային ծրագրում» երաժշտագիտական կարևոր խնդիրներից էր համարվել Կոմիտասի երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակության ավարտումը և Տ. Չուխաճյանի ու Ա. Խաչատրյանի երկերի ժողովածուների ակադեմիական հրատարակության իրականացումը: Կոմիտասի երկերի ակադեմիական հրատարակությունն իրականություն դարձավ, Ա. Խաչատրյանի ժառանգությունը հրատարակվեց Մոսկվայում ... Հեռանկարային ծրագրի համաձայն՝ երաժշտագետների առջև կանգնած խնդիրներից էր Տ. Չուխաճյանի, Կոմիտասի, Ալ. Սպենդիարյանի և Ա. Խաչատրյանի գիտական կենսագրությունների լուսաբանությունը:

2. Երևանում՝ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում, կբեմադրվի «Զեմիրեն», իսկ Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում՝ «Արիֆի խորամանկությունը». չէ՞ որ 2018-ին իր ծննդյան 150-ամյակն է բոլորելու հայկական առաջին՝ «Արշակ Բ» օպերան:

3. Երևանում վերջապես կհիմնադրվի Տիգրան Չուխաճյանի թանգարանը:

Ես հավատում եմ ...

ТИГРАН ЧУХАДЖЯН И ПУТИ РАЗВИТИЯ АРМЯНСКОГО
МУЗЫКАЛЬНОГО ИСКУССТВА
(К 180-летию со дня рождения)

АННА АСАТРЯН

Резюме

Тигран Чухаджян (1837–1898) является основоположником армянской классической профессиональной композиторской школы. Его творчество, знаменуя целую историческую эпоху, оставило глубокий след в истории армянской классической музыки, во многом обусловив ее дальнейшее развитие.

Т. Чухаджян основал армянский музыкальный театр. Чудом сохранившиеся и дошедшие до нас пока неизданные рукописи шести его опер, хранящиеся в ереванском Музее литературы и искусства им. Е. Чаренца, ознаменовали зарождение некоторых жанров в армянской классической музыке – историко-романтического («Аршак Второй»), комического – триада комических опер («Хитрость Арифа», «Кесе Кехва», «Леблебиджи Ор-ор-ага»), патриотического («Индиана») и опера-сказка («Земирэ»). Т. Чухаджян – автор первых образцов армянского романса, с его именем связано также зарождение армянской фортепианной музыки. Значителен вклад композитора в симфоническую музыку. Своим произведением “*Regretium mobile*” для фортепиано с оркестром, ставшим прообразом армянской фортепианной музыки, сочинениями для симфонического оркестра (в том числе «Восточная фантазия», «Восточный танец», «Марш благодарности», «Большой персидский марш» (2 варианта), большое поурри по мотивам «Леблебиджи Ор-ор-ага», поурри по мотивам оперы «Эбудиа и Земирэ», фантазия «Земирэ», «Армянская мелодия», «Мелодия», «Марш» и др.) он заложил основы армянской симфонической музыки.

Т. Чухаджян стал первым организатором армянского музыкального театра. Создание первых армянских опер сопровождалось формированием музыкального театра. Созданная под руководством Т. Чухаджяна и Т. Галемджяна «Османская оперная труппа» стала первой в армянской действительности музыкальной театральной труппой, состоящей исключительно из армянских артистов (эта труппа была первой на Ближнем Востоке), в руках которых оказалась монополия постановок музыкальных спектаклей.

Уже при жизни Т. Чухаджян стал общевосточным явлением. Он был первым из восточных музыкантов, который, получив профессиональное образование и в совершенстве владея европейской композиторской техникой, нашел пути сближения музыкальных культур Востока и Запада, закрепил в восточной музыке жанр оперы, симфонии и камерной музыки. Творческая деятельность композитора имела огромное значение для дальнейшего развития турецкой музыки: он заложил основы европейских принципов музыкального театра, сольного и хорового исполнения в Османской империи.

DIKRAN TCHOUHADJIAN AND THE WAYS OF DEVELOPMENT OF
ARMENIAN MUSICAL ART

(On the 180th birth anniversary)

ANNA ASATRYAN

S u m m a r y

Dikran Tchouhadjian (1837–1898) is the founder of the Armenian classical professional composer school, whose music marks a whole historical era and has left a deep imprint in the history of Armenian classical music, having promoted the further development of that field of art.

He is also the founder of the Armenian musical theater. With his six operas (still unpublished manuscripts were revealed in the composer's miraculously survived couch, kept in Ye. Charents Museum of Literature and Art in Yerevan), he inculcated in Armenian classical music several operatic genres: historical-romantic – “Arshak II”, comic – a triad of “Arif's Ruse”, “Qyose Qehya” and “Lelebiji Hor-Hor Agha”, patriotic – “Indiana”, and the fairy-tale opera – “Zemireh”. D.Tchouhadjian composed the first Armenian romance songs; with his name is associated the appearance of Armenian piano music. Tchouhadjian laid the foundation of Armenian symphony music. His substantial symphonic legacy includes the prototype of an Armenian piano concerto – “Mouvement Perpétuel” for piano and orchestra, works for symphony orchestra – “Oriental Fantasia”, “Oriental Dance”, “March of Gratitude”, “Great Persian March” (two versions), Great Potpourri to the tunes from “Lelebiji Hor-Hor Agha”, Potpourri to the tunes from “Ebudia and Zemireh”, Fantasia “Zemireh”, “Armenian Melody”, “Melody”, “March”, etc.

D. Tchouhadjian was the first to organize the Armenian musical theater. The creation of the first Armenian operas concurred with the foundation of the musical theater. The “Ottoman Operatic Troupe”, founded under the guidance of D.Tchouhadjian and T. Galemjyan, was the first musical theater troupe in the Armenian reality and in the whole Near East, and the first troupe staffed solely with Armenian artists. They possessed the sole privilege of staging musical performances. In the Near East for the first time ever, were staged operas composed by Armenians, directed by Armenians, performed by Armenians.

D. Tchouhadjian had become an all-oriental phenomenon during his lifetime, the founder of the Near-Eastern musical theater. He was the first of the oriental musicians who, having received qualified musical education and perfectly mastering the European composing secrets, found ways to bring the musical cultures of the East and the West closer, instilled the genres of opera, symphony and chamber music in oriental music. His activity promoted the progress of Turkish music: he introduced in the Ottoman Empire the European principles of the musical theater, solo, choral and orchestral writing.